զարդուք դրուագելով, պատրաստութեամբ զամենայն ըստ գործոյ Տեառն։ Զայնոսիկ լուեալ եպիսկոպոսապետին և Զուանչիրի գրեն առ այրն Աստուծոյ Իսրայէլ, զի և նոքա հաղորդեսցին հասանել 'ի ժամադրութիւն նաւակատեաց նշանին յօծումն սրբոյ խաչին, յորում մեծաւ լրջմտութեամբ քաջահաւան եղեալ քահանային Տեառն՝ պատրաստական յօրինէր զպէտս կազմութեան նուիրական տանն ըստ օրինակի խաչազարդ պայծառութեան։ Այլ նոքա հեղգական ծուլութեամբ չ'ժամանէին հասանել յամբակ գործոյն, և յայնժամ տեսիլ Աստուծոյ երևէր 'ի վերայ պատրիարգին Եղիազարու, զի մի պղերգասցի երթալ օծանել զԽաչն Քրիստոսի, որոյ պարառնաբար յարուցեալ եկին 'ի վիճակն Գիս անուամբ նահանգին։ Եւ յայնժամ իշխանն մեծ չուեալ էր 'ի կողմանս հարաւոյ 'ի Սիսականացն գաւառ։ Եւ վասն զի նմանակիր առաքելոցն էր բանիւք և գործովք, զպատրանաց ցնորս վրէժխնդրութեամբ վանէր, զոր ինչ զճշմարտութիւն ծաղկէր, պսակ պարծանաց վարկանէր. ծանուցանէր՝ թէ Աստուածպաշտութիւն է խորհուրդ զարմանազործ տեսլեանն, որ երբեմն առ Իսրայէլ քահանայ, և ընդունէր զնա իբր զԱստուծոյ սպասաւոր։ Եւ հանեալ մասն 'ի սրբոյ Խաչէն Մաշտոցի զնէր 'ի փայտակերտ նորոգաշէն նշանն, օծանէր զնա իւղովն օրհնութեան և կանգնեալ 'ի մէջ եկեղեցւոյն՝ առնէր նաւակատիս մեծապէս խնկովք, հուշակաւոր հանդիսիւք եկեղեցական ուխտիւ և հաւատացելոց դասուք»։

Հայր Ղևոնդ վարդապետ Ալիշան՝ իւր «Տեղագիր Հայոց մեծաց» Հայաստանի աշխարհագրութեան մէջ 1855 թ. յերես 22, Ձիրուան նահանգի (Զամախի) Սաղիանի վանքի համար այսպէս գրէ.

«Ժամու մերձ 'ի Զամախի քաղաքին Սաղիան գիւղ է. ուր և վանք անուն Սաղիան ս. Ստեփաննոսի. շինեալ (գուցէ նորոգեալ) յամին 1660, կայ և այլ մենաստան 'ի Մասերի գիւղ (Մասանց գիւղ) ի հարաւոյ քաղաքին, նորոգեալ յամին 1680։

Հոգելոյս Յովհաննէս եպիսկոպոս Զահխաթունեանցն[1]) իւր

---

[1]) Հոգելոյս Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցը եկել է Սաղիան 1838 թուին Շամախւոյ թեմի վիճակային տեսանը (կոնսիստորիայն)